

# ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՅՈՒՆՈՒԱՐ 9Ի ԴԵՊՔԻՆ ՄԱՍԻՆ



Միջազգային մամլոյ գործակալութիւններէն փառելով հաղորդեր էին Յունուար 9ին ըՍտեփանակերտի դէպքին մասին, որուն ընթացքին խորհրդային բարձրաստիճանի պատասխանատուներու եւ ազերի ղեկավարութիւններու մուտքը փառաքին արգիլուեր էր հայ բնակչութեան կողմէ: Արմենփրէսի քրքակիցը այս մասին կուտայ յաւելեալ տեղեկութիւններ՝ գանձնիք փառելով փառաքին կուսակցական կազմակերպութեան Բ. փարտուղար Հրանդ Մելիքումեանէն:

«Յունուար 8-ին Ստեփանակերտ ժամանեց ԼՂԻՄ-ի յատուկ կառավարման կոմիտէի նախագահ Արկադի Վոլսքին, - կը պատմէ Մելիքումեան: Նոյն կոմիտէի միւս անդամներուն եւ կուսակցական պատասխանատուներու հետ կայացած հանդիպման ընթացքին ան հաղորդեց, թէ Յունուար 9-ին, Ստեփանակերտ պիտի ժամանեն Ս. Միութեան Կենտկոմի քարտուղար Անտրէյ Կիրենքոյն եւ Գերագոյն Խորհուրդի Ազգութիւններու Խորհուրդին նախագահ Ռաֆիք Նիշանովը՝ Ատրպէյճանի քանի մը ղեկավար աշխատողներու հետ: Իր կարծիքով, անոնց ուղեւորութեան նպատակը պիտի ըլլար ԼՂԻՄ-ի վերաբերեալ Ս. Միութեան Գերագոյն Խորհուրդի վերջին որոշման դարձնական իրականացման միջոցառումներու մշակումը, որոշում՝ որ, ինչպէս յայտնի է, մերժուեր կը Մարզի հայ բնակչութեան կողմէ:

Ստեփանակերտի զլխաւոր հրատարակէն մինչեւ օդակայան տանող բոլոր ճամբաները Յունուար 9-ի առաւօտեան կը դանուէին զինւորական վերահսկողութեան տակ: Տեղեկանալով այդ մասին, քաղաքին բնակիչները ի նշան բողոքի լքեր էին իրենց աշխատանքները եւ դուրս եկեր փողոց, փորձելով խանդարել Ատրպէյճանի պատուիրակութեան ժամանումը: Չինուորականները դարձեալ հրազէն էին գործածեր, որուն հետեւանքով վիրաւորուեր էին երեք անմեղներ՝ Իշխան Խաչիկեանը, Լեւոն Մանուկ-

եանը եւ Սամուէլ Միրզոյեանը, որոնք փոխադրուեր էին մարզային հիւանդանոց: Մթնոլորտը կը շիկանար բոպէ առ բոպէ:

Տեղեկութիւններ ստանալով որ դարձեալ արիւն կը հոսի, քաղաքի կուսակցական պատասխանատուները առաջին քարտուղար Վալերի Աթաջանեանէն խնդրեցին զանդահարել օդակայան՝ Ա. Վոլսքին, ուր մինչ այդ կը դանուէին նաեւ Ա. Կիրենքոյն եւ Ռ. Նիշանովը, իրենց ուղեկցող ատրպէյճանցիներուն հետ: Անհրաժեշտ էր անոնց ղեկուցել քաղաքին մէջ ստեղծուող պայթիւնալի իրադրական մասին, ինչ որ կատարուեցաւ:

Տակաւին մինչ այդ, ինչպէս հետախօսով հաղորդեր էր օդակայանի պետը, խումբ մը արցախցի ճամբորդներ խօսքի բռնուեր էին Ա. Կիրենքոյնի եւ Ռ. Նիշանովի հետ եւ միանշանակ կերպով անոնց հասկցուցեր, որ երկրի Գերագոյն Խորհուրդի 1989 Նոյեմբեր 28-ի որոշումը զարարողցիներու համար անընդունելի է: Ուստի, եթէ ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղարը եւ Ազգութիւններու Խորհուրդի նախագահը եկեր են այդ որոշումը պարտադրելու նպատակով, ապա աւելի լաւ էր որ ետ դառնային:

Հետախօսային խօսակցութիւն տեղի ունեցեր էր նաեւ Վ. Աթաջանեանի եւ Ա. Կիրենքոյնի միջեւ: Աթաջանեանը զրոյցի բովանդակութեան մասին յետադային տեղեկացուց կուսակցութեան քաղաքային մեր ժողովին: Մոսկուայի պատասխանատուն առաջարկեր էր օդակայանին մէջ հանդիպում ունենալ մեր ժողովի անդամներուն հետ, ինչ որ մերժուեցաւ՝ հաշուի առնելով խիստ լարուած իրադրութիւնը: Չէ՞ որ այսօր Ստեփանակերտի վերջին միջազգային ժամանակ զոհուած քանդակագործ Արմէն Յակոբեանի մահուան 7-րդ օրն էր, ինչ որ առաւել շիկացուցեր էր մթնոլորտը»:

Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ստեփանակերտ, 11 Յունուար